**ՎՃՌԵՑ**

1. «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. № 664-Ա որոշումը մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1. մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. «ԱԴԵԼ ԾԻՆ» ՍՊԸ-ԻՆ, «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ԻՆ, «ԱՄՎԱ» ՍՊԸ-ԻՆ և «Ա. Գ.Ս.Մ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ № 664-Ա որոշումը,

2. Դատական ծախսերը բաշխել հետևյալ կերպ.

2.1. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպությունից hօգուտ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումար՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումարի փոխհատուցում,

2.2. իսկ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Ազատ Դունամալյան**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE94-6C21-44D8-9EC4 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:*

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*